

## **ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ**

### **Աղիքային վարակիչ հիվանդություններ**

2022 թվականի նոյեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 641 դեպք, ինչը նույնն է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: 2022 թվականի նոյեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1 բռնկում Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպություններից մեկի հաճախորդների շրջանում, հիվանդացել է 5 քաղաքացի:

Նոյեմբեր ամսին հոկտեմբեր ամսվա համեմատ հիվանդացությունը նվազել է մոտ 1.13 անգամ, ինչը բնորոշ է տարվա այս շրջանին:

### **Սուր շնչառական հիվանդություններ**

2022 թվականի 49-րդ շաբաթվա ընթացքում շարունակվում է արձանագրվել ՍՇՎ-ով և գրիպով պայմանավորված միջին ինտենսիվության ակտիվություն՝ պահպանելով աճման միտումը: Նախորդ շաբաթվա միևնույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է հիվանդացության աճ՝ 1,1 անգամ, իսկ նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատ հիվանդացությունը ցածր է՝ 1,1 անգամ: ՀՀ մարզերից ՍՇՎ-ով ակտիվությունն առավել բարձր է Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Տավուշի մարզերում: Ընդհանուր դեպքերի 73%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները: Շտապ օգնության կանչերի 11%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

Շարունակական իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում վերջին 1 ամսվա ընթացքում իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են գրիպ Ա տեսակի H1N1 և H3 ենթատեսակի հարուցիչներ, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության Sars-Cov-2 հարուցիչներ:

### **Կորոնավիրուսային հիվանդություն**

2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է 445881 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 15068,6), որից՝ 255-ը (0,1%) ստանում են բուժում, 435060 (97,6%) անձ առողջացել է, 8712 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 294,4) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 144 դեպք (հ.ց. 4,9 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (224 դեպք, հ.ց. 7,6 դեպք ըստ 100.000 բնակչության) նվազել է -36%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 2,6%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 6,4%:

### **Քիմիական թունավորումներ**

2022 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 254 դեպք, որոնց 51.2%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 48.8%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 39.7%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից թունավորումներն են, 26.8%-ը՝ ալկոհոլային թունավորումներ են՝ պայմանավորված ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունմամբ, 23.2%-ը դեղամիջոցներով թունավորումներ են՝ ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 4.7%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից են, 2.4%-ը թունավոր կենդանիների խայթոցի արդյունք են, 2%-ը՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցության, իսկ 1.2%-ը՝ թունաքիմիկատներից թունավորման արդյունք են:

2022թ. նոյեմբեր ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.1 անգամ:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

2022 թվականի նոյեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշը նվազել է՝ նախորդ տարի նշված ժամանակահատվածում արձանագրվել է 2, 2022 թ-ին՝ 1 դեպք:

### **Ջոնոզ և մակաբուծային հիվանդություններ**

2022 թվականի նոյեմբեր ամսին հատուկ վտանգավոր վարակների՝ լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի դեպքեր չեն արձանագրվել, արձանագրվել է սիբիրյան խոցի 1 դեպք և առաջնակի հայտնաբերված սուր բրուցելոզի 17 դեպք: Հանգիստ է եղել նաև մալարիայի համաճարակային իրավիճակը, արձանագրվել է արևադարձային մալարիայի մեկ բերովի դեպք (Բենինից):

2022 թվականի նոյեմբերին ընդերային լեյշմանիոզի դեպքեր չեն արձանագրվել: 2022 թվականի ընթացքում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի ընդամենը 14 դեպք (2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 10):

2022թ նոյեմբերին արձանագրվել է Լայմի հիվանդության 1 դեպք: Տզերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ–Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի, ռիկետոցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման, փոխանցողների վարակվածության վտանգի հետ:

### **Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

2022 թվականի նոյեմբեր ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է եղել: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, կապույտ հազի և հարկապույտ հազի դեպքեր: